

Վ. Մ. ԽՈՒՄՏՈՎԻ ԱՆՎԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒԹՅԱՆ

ՕՏՆԱԲ
ԱԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅՏՆԻ ՍՈՍԻՆ
N 3

Կ. Տ Ա Կ Ի Տ Ո Ի Ս

Քաղեց եկ քաղցմանց
Պ. ԱՌՏԵԿԱՆ

9/2

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒԹՅԱՆ ՀՐԾՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1941

№ 3 ИЗВЕСТИЯ ИНОСТРАНЦЕВ ОБ АРМЯНАХ № 3
ЛАТИНСКИЕ ИСТОЧНИКИ

К. Т А Ц И Т

Перевод и комментарии
и. о. профессора П. СОТНИКЯНА

№ 3 OSAP ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ № 3
9(421925) ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
8-15

Կ. Տ Ա Կ Ի Տ Ո Ւ Ս

Քաղեց և լատիներենից քարգմանեց
պրոֆ. պատե. Պ. ՍՈՏՆԻԿՅԱՆ

1255

1255



Ա Ռ Ա Ջ Ա Յ Ա Ն

Պորբիուս Կորնելիուս Տակրտուսի կենսագրութիւնը հարուստ չէ ճշգրիտ տեղեկութիւններով: Հայտնի է, որ նա ծնվել է մ. թ. 55 թ. շուրջը. նրա մանկութիւնը անցել է Ներոնի ժամանակ, ստացել է իր ժամանակի համար լավ ճարտասանական կրթութիւն. ամուսնացել է հայտնի զորավար Ագրիպիայի դստեր հետ: Տակրտուսը ծագումով հեծելազորային ոչ-հռչակավոր իտալիկ ընտանիքից էր: Մտավորապես 80 թվ. նա քվեստորի պաշտոն է վարում և այդպիսով Սենատի անդամ է դառնում. 88 թ. շուրջը, հավանաբար, լեզատ էր Բելգիկայում: Վերադառնալով Գոմիտիանուսի ժամանակ, ստիպված թողնում է պետական գործունեութիւնը: Տրայանուսի ժամանակ նա Ասիայի պրոկոնսուլ էր: Մեռնում է մոտավորապես 120 թվ.: Կյանքի հարուստ փորձագրութիւնը, ավագ ժամանակակիցների վառ հիշողութիւնները, պատմական աղբյուրների ուշադիր ուսումնասիրութիւնը — այդ բոլորը առաջին դարու հռոմեական հասարակութեան մասին տալիս են հարուստ տեղեկութիւններ:

Հետագա պատմագիրների վրա նա քիչ է ազդել. սրանցից նրա ուժեղ ազդեցութեան տակ էր գտնվում Ամմիանուս Մարկելլիուսը (IV դարու երկրորդ կեսը): V դարուց Տակրտուսը մոռացութեան է տրվում: Միջին դարերում նա հազվադեպ է հիշատակվում: Սկսած XIV դարից՝ Տակրտուսի ազդեցութեան համար նոր շրջան է սկսվում: Առաջին անգամ տպագրվում է 1469 թվ.: Գնալով նրա հեղինակութիւնը աճում է: Նրանով ոգևորվում են Կորնելլը, Ռասինը, շատ են գնահատում XVIII դարում էնցիկլոպեդիստները, Ռուսսոն և այլն: Շատորրիանը նրան անվանում էր՝ «տիրաններից ժողովուրդների վրեժ առնող»:

Սկսած XIX դ. երկրորդ կեսից՝ բացահայտվում է Տակրտուսի միակողմանիութիւնը (Թյերրի, Ֆյուստել-դե-Կլամպ, Մոմզեն և այլն):

Տակրտուսը հռոմեական շատ ականավոր պատմագիր է

և համաշխարհային գրականութեան մեծ ներկայացուցիչներէ մեկը:

Նրա գրչին են պատկանում՝

դատական ճառեր, գրված ղեռ երիտասարդ հասակում.

1. Dialogus de oratoribus (Տրամախոսութեան հետադր-ները մասին). գրված է գեղեցիկ լեզվով և հարուստ է պատ-մական տեղեկութեաններով.

2. De vita et moribus Julii Agricolae (Յուլիուս Ագ-րիկոլայի կյանքի ու բարքի մասին). գրված է 98 թվ.

3. Նույն թվին գրել է իր հոշակավոր՝ De origine, situ, moribus ac populis Germanorum (Գերման ժողո-վուրդների, նրանց ծագման, տեղադրութեան և բարքերի մասին): Այս գրքում հեղինակը տալիս է այդ ժողովուրդ-ների անտեսական, ընտանեկան, սոցիալական, քաղաքա-կան և կրոնական կյանքը: Սա չափազանց թանգարժեք աղբյուր է:

4. Historia— 14 գիրք. ընդգրկում է ղեպքերը սկսած 69 թվի հունվարից մինչև Դոմիտիանուսի մահը (96 թվ.). գրվել է 105—07 թվ., պահպանվել են 1—4 գիրքը և 5-րդի առաջին մասը:

5. Նրա հեղինակութունների գլուխ գործոցն է՝ Annales— Տարեգրութուններ: Այստեղ նա հանդես է գալիս իբ-րև մեծ պատմագիր, գեղարվեստական շարագրութեան մեծ վարպետ, իբրև բարեխիղճ ճշմարտախոս, որը պատմական իրականութեան մութ կողմերը չի թազցնում: Նա հարազատ է իր աղբյուրներին, սակայն համառոտում է հեռավոր եր-կրներում եղած պատերազմական ղեպքերը ի վրաս առան-ձին մասերի ճշգրտութեան: Պահպանվել են 1—4 գիրքը, 11—16 գիրքը, իսկ 5-րդը և 6-րդը մեծ մասամբ կորել են: Յես քաղել եմ Annales և De Germania (5 և 3) գրքերից այն կտորները, որոնք վերաբերում են հայերին և մեզ զբաղե- ժողովուրդներին:

Տեքստը վերցրել եմ ակնավոր գիտնական՝ Նիպպեր-դեյի գիտական ծանոթագրված Annales-ից և Teubner-ի հրատարակած De Germania գրքից:

Ծանոթագրութունները տալիս օգտվել եմ հետևյալ աղ-բյուրներից՝

1. Karl Nipperdey (Cornelius Tacitus erklart von K. Nipperdey, siebente verbesserte Auflage, bearbeitet von Georg Andresen. Berlin, 1879 I, 1880—II):

2. Б. Низе. Очерк римской истории и источникове-дения. Перевод с 4 нем. изд. 1910 г.

3. Летопись К. Тацита в пер. В. Модестова.

4. История римского права проф. И. Покровского.

5. Проф. Б. А. Тураев. История древнего Востока.

6. Ակադ. Մանանդյան Հ.

1. О торговле и городах Армении, 1930 г.

2. Հայաստանի գլխավոր ճանապարհները, 1936 թ.

3. Տիգրան երկրորդը և Հռոմը, 1940 թ.

Թարգմանել եմ հետևյալ գլուխները՝

Liber II-ից 1—4, 43 (քաղվ.), 47 (ք.), 55 (ք.), 56, 57 (ք.), 58, 60 (ք.), 64 (ք.), 68.

» III-ից 48 (ք.)

» IV-ից 5 (ք.)

» VI-ից 31—37, 38 (ք.), 40 (ք.), 41—44

» XI-ից 8—10

» XII-ից 10—11, 12 (ք.), 13—14, 44—51

» XIII-ից 5 (ք.), 6 (ք.), 7—9, 34 (ք.), 35—41

» XIV-ից 23—26

» XV-ից 1—17, 18 (ք.), 24—31

» XVI-ից 23 (ք.), 24 (ք.):

De Germania գրքից երկու քաղվածք:

Պ. ՍՈՏՆԻԿՅԱՆ

C. C. TACITI ANNALIUM

LIBER II.

I. Sisenna Statilio (Tauro) L. Libone consulibus mota Orientis regna provinciaeque Romanae, initio apud Parthos orto, qui petitem Roma acceptumque regem, quamvis gentis Arsacidarum, ut externum aspernantur. Is fuit Vonones, obses Augusto datus a Phraate. Nam Phraates, quamquam depulisset exercitus ducesque Romanos, cuncta venerantium officia ad Augustum verterat partemque prolis firmandae amicitiae miserat, haud perinde nostri metu quam fidei popularium diffisus.

II. Post finem Phraatis et sequentium regum ob internas caedes venire in urbem legati a primoribus Parthis, qui Vononem, vetustissimum liberorum eius, accirent. Magnificum id sibi credidit Caesar auxitque opibus; et accepere barbari laetantes, ut ferme ad nova imperia. Mox subiit pudor: degeneravisse Parthos; petitem alio ex orbe regem, hostium artibus infectum; iam inter provincias Romanas solum Arsacidarum haberi darique.

ԿԱՅՈՒՄ ԿՈՐՆԵԼԻՈՒՄ ՏԱԿԻՏՈՒՄ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ Ի Ր Ք II.

Քլ. 1. Սիսեննա Սատիլիուս (Տավրուսի) և Լյուկիուս Աիբոնի կոնսուլության¹ ժամանակ Արևելքի պետությունները և Հռոմի պրովինցիաները² խռովության մեջ են. դա սկսվում է Պարթևների մոտ, որոնք Հռոմից խնդրած և ստացած թագավորին, թեպետ և Արշակունիների տոհմից էր նա, իբրև օտարի՝ արհամարհանքով մերժում են: Դա վռնոնն³ էր, որը Փրասատի⁴ (Հրահատի) կողմից տրված էր Աուգուստուսին իբրև պատանդ: Չէ՞ որ Փրասաաը, թեպետ և Հռոմեական զորքն և առաջնորդներին դուրս էր քշել⁵, դեպի Աուգուստուսը ցույց էր տալիս հարգանքի բոլոր նշանները⁶ և իր բարեկամությունն ամրապնդելու նպատակով ուղարկել էր իր զավակների մի մասը Հռոմ, ոչ այնքան մեզնից վախենալու պատճառով, որքան համերկրացիների հավատարմությանը չվստահելու⁷ հետևանքով:

Քլ. 2. Փրասատի և սրան հաջորդող⁸ թագավորների վախճանից հետո, ներքին արյունահեղությունների պատճառով Պարթևների առաջավոր տոհմիկների կողմից Հռոմ⁹ եկան պատգամավորներ, որպեսզի նրա որդիներից երիցագույնին՝ վռնոնին հրավիրեն: Կայսրն¹⁰ իրեն համար այդ բանը պատվաբեր համարեց ու շուք և ուժ տվեց նրան: Եվ բարբարոսներն ընդունեցին նրան այն ուրախությամբ, որով համարյա միշտ ընդունում են նոր իշխանավորին: Շուտով նրանց տիրեց ամոթը. ասում էին, թե Պարթևներն այլասերվել են, ուրիշ կրկրից՝ թշնամիների սովորություններով վարակված թագավոր են խնդրել. Արշակունիների գահը Հռոմայեցիների պրովինցիաների մեջ է մտնում և իբրև պարզ և տրվում:

Ubi illam gloriam trucidantium Crassum, exturban-
tium Antonium, si mancipium Caesaris, tot per annos
servitutem perpessum, Parthis imperitet? Accendebat de-
dignantes et ipse, diversus a maiorum institutis, raro ve-
nato, segni equorum cura; quotiens per urbes incederet,
lecticae gestamine fastuque erga patrias epulas. Inride-
bantur et Graeci comites ac vilissima utensilium anulo
clausa. Sed prompti aditus, obvia comitas; ignotae Par-
this virtutes, nova vitia, et quia ipsorum moribus aliena,
perinde odium pravis et honestis.

III. Igitur Artabanus, Arsacidarum e sanguine, apud
Dabas adultus, excitur, primoque congressu fusus repa-
rat vires regnoque potitur. Victo Vononi perfugium Ar-
menia fuit, vacua tunc interque Parthorum et Romanas
opes infida ob scelus Antonii, qui Artavasden, regem
Armeniorum, specie amicitiae inlectum, dein catenis o-
neratum, postremo interfecerat. Eius filius Artaxias, me-
moria patris nobis infensus, Arsacidarum vi seque reg-
numque tutatus est. Occiso Artaxia per dolum propin-
quorum datus a Caesare Armeniis Tigranes deductusque
in regnum a Tiberio Nerone. Nec Tigrani diuturnum
imperium fuit neque liberis eius,

Ո՞ւր է Կրասսուսին խողխողոյնների և Անտոնիուսին
զուրս քշողների փառքն, եթե Պարթևներին պիտի տիրի
Կայսեր այն ստրուկը, որ այնքան տարիներ ստրկությունը
համառաբար տարել է: Մերժողներին բորբոքում էր նաև
նա, որը երեսը դարձրել էր պապենական բարքերից, որը
հազվադեպ էր որսի գնում և ձիերի հոգատարության մեջ
ծուլ էր: Քանի քանի անգամ նա երևացիլ է քաղաքնե-
րում, բայց ոչ այլ կերպ, քան պատգարակի վրա: Նա ար-
համարհում էր հայրենի կերակուրները: Ծաղրի էին են-
թարկվում նրա շքախմբի հույն ուղեկիցները և ծաղր ու
ծանակի առարկա էր այն, որ նա մատանիքով կնքված էր
պահում տնտեսության համար պիտանի իրերից էփանա-
գույնները¹¹: Նրա գյուլբաժանաչելիությունը, սիրալիր ընդա-
ռաջող վարվելակերպը— Պարթևներին անծանոթ առաքինու-
թյուններ են, նոր արատներ են զրանք. և որովհետև այդ-
բոլորն իրենց սովորույթներին խորթ է, ուստի հավասա-
րապես ատելություն են զգում թե՛ զեպի պատվարեք
արարքն և թե՛ զեպի վատը:

Գլ. 3. Այդպիսով հրավերվում է Արտաբանը (Արտա-
վանը), արյունով¹² Արշակունի, մեծացած Գահաս¹³ ժողո-
վրդի մոտ, հենց առաջին իսկ բախման մեջ պարտվում ու
հետո ուժեր է պատրաստում և տիրանում թագավորությա-
նը: Պարտված Վոնոնի համար Հայաստանն սպաստարան
ծառայեց, այն Հայաստանը, որի գահն այդ ժամանակ թա-
փուր էր և որը, գտնվելով Պարթևների և Հռոմայեցիների
ուժերի միջև, անհավատարիմ էր Անտոնիուսի ոճրագոր-
ծության պատճառով¹⁴, Անտոնիուսի, որը Հայաստանի թա-
գավոր Արտավազդին, գրավելով բարեկամության անվան
տակ, հետո շղթայել ու սպանել էր: Սրա որդի Արտաշիասը
(Արտաշեսը)՝ իր հոր հետ կապված հիշողության պատճառով
մեզ թշնամացած էր. նա պաշտպանեց թե՛ իր անձը և թե՛
պետությունն Արշակունիների ուժով: Մերձավորների նեն-
գությամբ կատարված Արտաշիասի սպանությունից հետո,
Հայաստանին կայսեր կողմից տրվեց Տիգրանը¹⁵, որին Տի-
բերիուս Ներոնի շնորհիվ ուղեկցեցին զեպի իր թագավո-
րությունը: Ոչ Տիգրանի, ոչ էլ սրա որդիների տիրապե-

quamquam sociatis more externo in matrimonium regnumque.

IV. Dein iussu Augusti inpositus Artavasdes et non sine clade nostra deiectus. Tum C. Caesar componendae Armeniae deligitur. Is Ariobarzanen, origine Medum, ob insignem corporis formam et praeclarum animum, volentibus Armeniis praefecit. Ariobarzane morte fortuita absumpto stirpem eius haud toleravere; temptatoque feminae imperio, cui nomen Erato, eaque brevi pulsa incerti solutique et magis sine domino quam in libertate profugum Vononen in regnum accipiunt. Sed ubi minitari Artabanus et parum subsidii in Armeniis vel, si nostra vi defenderetur, bellum adversus Parthos sumendum erat, rector Syriae Creticus Silanus excitum custodia circumdat, manente luxu et regio nomine. Quod ludibrium ut effugere agitaverit Vonones, in loco reddemus.

(բաղվածք)

XLIII. Igitur haec et de Armenia, quae supra memoravi, apud patres disseruit, nec posse motum Orientem nisi Germanici sapientia componi: nam suam aetatem vergere, Drusi nondum satis adolevisse. Tunc decreto patrum permissae Germanico provinciae, quae mari dividuntur, maiusque imperium, quoquo adisset, quam iis, qui sorte aut missu principis obtinerent.

տությունը երկարատև չէր, թեպետ վերջիններն ըստ օտար (ոչ-հռոմեական) սովորության ամուսնացել էին միասին թագավորելու նպատակով:

Պր. 4. Հետո Առգուստուսի հրամանով Արտավազդը գահ բարձրացավ և տապալվեց նշ առանց կորուստ պատճառելու մեղ: Այդ ժամանակ Հայաստանը խաղաղացնելու համար՝ ընտրվում է Կ. Կեսարը¹⁶: Սա ծագումով Մեծ Արիոբարզանին՝ հայերի ցանկությամբ նշանակում է Հայաստանի պետ, նրա մարմնի նշանավոր գեղեցկության և շատ աչքի ընկնող քաջության պատճառով: Արիոբարզանը մահացավ պատահական մահով: Սրա հետնորդները իշխանությունը հայերը չտարան: Կնոջ իշխանությունը փորձելուց (այդ կնոջ անունն էր Էրատո) և սրան շուտով արտաքսելուց հետո, անհաստատ լինելով, և ավելի շուտ առանց պետի մնալու, քան աղատության մեջ լինելու համար՝ հայերը թագավոր են ընդունում փախստական Վոնոնին: Բայց քանի որ Արտավանը սպառնում էր, իսկ Վոնոնը չնչին պաշտպանություն էր գտնում Հայաստանում, և եթե պաշտպանվեր մեր ուժով, անխուսափելի կլիներ պատերազմը Պարթևներին դեմ, Միրիայի փոխանորդ Կրետիկոս Միլանուսը կանչում է Վանոնին և շրջապատում նրան՝ հսկիչ պահակախմբով, սակայն պահպանում է նրա շուքն ու թագավորական անունը: Մենք իր տեղում կտեսնենք, թե Վոնոնն այդ խաղից խուսափելու համար ինչ միջոց մտածեց¹⁷:

(բաղվածք)

Պր. 43. Ուրեմն այդ¹⁸ և այն, ինչ վերև հիշատակեցի Հայաստանի մասին, զեկուցվեց հայրերի¹⁹ առաջ, թե խոսվահույզ Արևելքը կարելի է խաղաղեցնել միայն Գերմանիկոսի²⁰ խելամուտությամբ: Բանն այն է, որ սրա տարիքն արդեն անցել էր, իսկ Դրուսոսը²¹ դեռ բավականաչափ չէր հասունացել: Այդ ժամանակ հայրերի որոշումով Գերմանիկոսին վերապահվեցին անդրծովյան պրովինցիաները և, որտեղ էլ որ նա հանդես գար, տրվեց նրան ավելի մեծ իշխանություն, քան այն երկրներում, որոնց տիրում են վիճակահանությամբ կամ պրինցեպսի²² հանձնարարությամբ:

XLVII. Eodem anno duodecim celebres Asiae urbes conlapsae nocturno motu terrae; quo improvisior graviorque pestis fuit. Neque solitum in tali casu effugium subveniebat in aperta prorumpendi, quia diductis terris haurebantur. Sedisse immensos montes, enisa in arduum, quae plana fuerint, effulsisse inter ruinam ignes memorant.

LV. ...Nota haec Germanico; sed praeverti ad Armenios instantior cura fuit.

LVI. Ambigua gens ea antiquitus hominum ingenii et situ terrarum, quoniam nostris provinciis late praetenta penitus ad Medos porrigitur; maximisque imperiis interiecti et saepius discordes sunt, adversus Romanos odio et in Parthum invidia. Regem illa tempestate non habebant, amoto Vonone; sed favor nationis inclinabat in Zenonem, Polemonis, regis Pontici, filium, quod is prima ab infantia instituta et cultum Armeniorum aemulatus, venatu epulis, et quae alia barbari celebrant, proceres plebemque iuxta devinerat. Igitur Germanicus in urbe Artaxata adprobantibus nobiles, circumfusa multitudine insigne regium capiti eius imposuit: ceteri venerantes regem Artaxiam consalutavere, quod illi vocabulum indiderant ex nomine urbis. At Cappadoces, in formam provinciae redacti, Q. Veranium legatum acceperunt;

Պլ. 47. Նույն տարին, Ասիայի 12 հռչակավոր քաղաքներ²³ գիշերվա երկրաշարժից փուլ եկան. աղետն այնքան ավելի ծանր էր, որքան անակնկալ: Չէր օգնում այդպիսի դեպքերում գործադրվող սովորական փախուստը դեպի բաց տեղերը, որովհետև կլանվում էին բացված գետնից: Հիշողությամբ պատմում են, որ հսկայական սարեր նստեցին՝ այն, ինչ հարթ էր, բարձունք դարձավ. պատըռվածքներից կրակներ փայլեցին:

Պլ. 55. ...Այդ²⁴ հայտնի էր Գերմանիկոսին, բայց Հայաստանով զբաղվելու հոգան ավելի ուժեղ հանդիսացավ:

Պլ. 56. Այս ժողովուրդը հնուց ի վեր տատանվող է թե մարդկանց բնավորության և թե երկրների տեղադրության պատճառով: Այդ երկիրը լայնորեն սահմանակից է մեր պրովինցիաներին և տարածվում է հեռու՝ մինչև Մեզբի աշխարհը: Մեծագույն պետությունների միջև է տեղավորված Հայաստանը և շատ հաճախ Հայերը երկպառակ են, որովհետև նրանք թե ատում են Հռոմայեցիներին և թե նախանձում են Պարթևներին: Այդ ժամանակաշրջանում Վոնոնին հեռացնելուց հետո, թագավոր չունենին, սակայն ժողովրդի տրամադրությունը հակվում էր դեպի Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդի՝ Չենոնը, որովհետև հենց առաջին մանկությունից նա կրթվել էր Հայերի սովորություններով ու կենցաղով. որսագնացության, խրախճանքների և բարբարոսների մոտ հաճախ գործադրվող այլ սովորությունների միջոցով նա իրեն հետ էր կապել թե ազնվականներին և թե հասարակ ժողովրդին: Այդպիսով Գերմանիկոսն (Արտաքսատա) Արտաշատ քաղաքում մեծամեծների հավանություններ և շուրջը հավաքված բազմության ներկայությամբ՝ նրա գլխին դրեց թագավորական գարդանշանը: Մնացածները հարգանք հատուցելով թագավորին, ողջունում էին, Արտաշես անվանելով: Այդպիսի կոչեցին նրան քաղաքի անվան օրինակով: Եվ Կապադովկացիները (Կապադոկիները), որոնց երկիրը դարձել էր պրովինցիա, ընդունեցին Պլինիոս Վերանիոս լեզուսին: Թագավորական հարկերից

et quaedam ex regiis tributis deminuta, quo mitius Romanum imperium speraretur. Commagenis Q. Servaeus praeponitur, tum primum ad ius praetoris translatis.

(բաղվածք)

LVII. Cunctaque socialia prospere composita non ideo laetum Germanicum habebant, ob superbiam Pisonis, qui iussus partem legionum ipse aut per filium in Armeniam ducere utrumque neglexerat. ...

LVIII. Inter quae ab rege Parthorum Artabano legati venere. Miserat amicitiam ac foedus memoraturos, et cupere novari dexteras, daturumque honori Germanici, ut ripam Euphratis accederet; petere interim, ne Vonones in Syria haberetur neu proceres gentium propinquis nuntiis ad discordias traheret. Ad ea Germanicus de societate Romanorum Parthorumque magnifice, de adventu regis et cultu sui cum decore ac modestia respondit: Vonones Pompeiopolim, Ciliciae maritimam urbem amotus est. Datum id non modo precibus Artabani, sed contumeliae Pisonis, cui gratissimus erat ob plurima officia et dona, quibus Plancinam devinxerat.

(բաղվածք)

LX. mox visit veterum Thebarum magna vestigia. Et manebant structis molibus litterae Aegyptiae, prio-

մի քանիսը թեթևացրել էին, որպեսզի դրանով Հռոմեական իշխանությունը խաղաղասեր ակնկալություններով ընդունվի: Կոմմազենացիների կառավարիչ է նշանակվում Կվինտուս Սերվիուսը. այդ ժամանակ դրանք նոր էին անցել պրետորական իրավունքին:

(բաղվածք)

Պլ. 57. Դաշնակիցների գործերի բովանդակ հաջող կարգավորումը չէր ուրախացնում Գերմանիկուսին. պատճառը Պիսոնի գոռոզությունն էր: Պիսոնին հրամայված էր, որ լեզեոնների մի մասը տանի Հայաստան կամ անձամբ կամ իր որդու միջոցով. հրամանի երկու մասն էլ նա արհամարհել էր: ...

Պլ. 58. Այդ դեպքերի ժամանակ եկան Պարթևական թագավոր Արտավանի պատգամավորները: Նրանք ուղարկված էին հիշեցնելու բարեկամության և դաշինքի²⁵ մասին, ասելով, որ Արտավանը շատ է ցանկանում, որ դաշինքը վերանորոգվի՝ հայտնում է, թե Գերմանիկուսի պատվին՝ ինքն անձամբ կգա մինչև Սփրատի ափը. նա խնդրում է, որ Վոնոնը չպահվի Սիրիայում, որպեսզի հարևան էմիսարների միջոցով ժողովուրդներին²⁶ մեծամեծներին չղրղի երկպառակություն: Այդ առթիվ Գերմանիկուսը Հռոմայեցիների և Պարթևների դաշնադրության մասին ավելց փառավոր պատասխան. նա պատասխանեց արժանապատվությամբ և համեստորեն, թե թագավորի դալու և թե իրեն՝ Գերմանիկուսին պատիվ աալու մասին: Վոնոնին հեռացրին Պոմպեոպոլիս՝ Կիլիկիայի ծովափնյա քաղաքը: Այդ կատարվեց ոչ միայն Արտավանի խնդրի շնորհիվ, այլ նաև Պիսոնին վերավորելու նպատակով, որին Վոնոնը շատ երախտապարտ էր այն բազմաթիվ ծառայությունների և շնորհումների հետևանքով, որոնցով նա բարոյապես կապել էր Պլունկինային²⁷:

(բաղվածք)

Պլ. 60. ... շուտով Գերմանիկուսը դնեց հին Թեբեի²⁸ վիթխարի հետքերը: Կառուցված հսկա մասսիվների վրա

18081
58767
1918



rem opulentiam complexae; jussusque e senioribus sacerdotum patrium sermonem interpretari referebat habitasse quondam septingenta milia aetate militari, atque eo cum exercitu regem Rhamsen Libya Aethiopia Medisque et Persis et Bactriano ac Scythia potitum, quasque terras Suri Armenique et contigui Cappadoces colunt, inde Bithynum, hinc Lycium ad mare imperio tenuisse....

(բազվածք)

LXIV. Simul nuntiato regem Artaxian Armeniis a Germanico datum decrevere patres, ut Germanicus atque Drusus ovantes urbem introirent....

LXVIII. Per idem tempus Vonones, quem amotum in Ciliciam memoravi, corruptis custodibus effugere ad Armenios, inde Albanos Heniochosque et consanguineum sibi regem Scytharum conatus est. Specie venandi omisis maritimis locis avia saltuum petiit, mox pernitate equi ad amnem Pyramum contendit, cuius pontes accollae ruperant audita regis fuga; neque vado penetrari poterat. Igitur in ripa fluminis a Vibio Frontone, praefecto equitum, vincitur, mox Remmius evocatus, priori custodiae regis adpositus, quasi per iram gladio eum transigit. Unde maior fides conscientia sceleris et metu indicii mortem Vononi inlatam.

պահպանվել էին եգիպտական զրեբը²⁹, որոնք պարունակում էին առաջին հարստության պատմությունը: Մեր քրմերից մեկը, հայրենի լեզուն մեկնաբանելու հրամանը ստանալով, ասաց, թե միաժամանակ այստեղ ապրում էին 700.000 զինակիր հասակի տղամարդիկ. այդ զորքով Ռամսես²⁰ թագավորը տիրել է Լիբիային, Եթովպիային, Մեդիային, Պարսկաստանին, Բաղտրիային և Սկյութիային: Իր իշխանության տակ էր առել այն երկրները, որտեղ ապրում են Սիրիացիք, Արմենները (հայերը) և սրանց հարևան Կապադովկացիները: Նա գրավել էր այնտեղից մինչև Բիթյունի (Բյութանիայի), այստեղից մինչև Լյուկիայի ծովը....

(բազվածք)

Գլ. 64. Միաժամանակ հաղորդվեց, որ Գերմանիկոսը Հայաստանին թագավոր է նշանակել Արտաշեսին: Հայրերը որոշեցին, որ Գերմանիկոսը և Դրուսոսը հանդիսավոր մուտք գործեն Հոմմ....

Գլ. 68. Նույն ժամանակ Վոնոնը, որը, ինչպես հիշատակել էի, հեռացվել էր Կիլիկիա, կաշառելով պահպաններին, փորձեց փախչել Հայաստան, այնտեղից Ալվանք (Ալրանիա) և Հենիոքներին³¹ (Հենիոքների) և ապա իրեն արյունակից սկյութական թագավորի մոտ: Որսի գնալու պատրվակի տակ, նա թողեց ծովափնյա վայրերը և գնաց անտառապատ սարերի խորքերը. հետո, օգտվելով արագավազ ձիուց, շտապեց դեպի Պիրամ³² գետը, որի կամուրջները, լսելով թագավորի փախուստի մասին, քանդել էին զրացիները: Նա չէր կարող գետը ոտքով անցնել: Այդպիսով նա գետի ափին բռնվում և կապտավում է հեծնազորի պրեֆեկտ Վիրիուս Ֆրոնտոնի ձեռքով: Հետո վերստին կանչված վետերան Ռեմմիուսը, որը կցված էր թագավորի առաջին պահակակետին, իբր թե բարկությունից ծակում է նրան սրով: Այստեղից ավելի են համոզվում, որ Ռեմմիուսն իր հանցագործությունը գիտակցելու և մատնությունից վախենալու ազդեցություն տակ է Վոնոնին մահ պատճառել:

(բաղվածք)

XLVIII. ...Nihil ad veterem et patriciam Sulpiciorum familiam Quirinius pertinuit, ortus apud municipium Lanuvium, sed impiger militiae et acribus ministeriis consulatum sub divo Augusto, mox expugnatis super Ciliaciam Homonadensium castellis insignia triumphi adeptus; datusque rector C. Caesari Armeniam obtinenti Tiberium quoque Rhodi agentem coluerat.

(բաղվածք)

V. ... Cetera Africae per duas legiones, parique numero Aegyptus, dehinc initio ab Syriae usque ad flumen Euphraten, quantum ingenti terrarum sinu ambitur, quattuor legionibus coërcita, accolis Hiberno Albanoque et aliis regibus, qui magnitudine nostra proteguntur adversum externa imperia. ...

XXXI. C. Cestio M. Servilio consulibus nobiles Parthi in urbem venere, ignaro rege Artabano. Is metu Germanici fidus Romanis, aequabilis in suos, mox superbiam in nos, saevitiam in populares sumpsit, fretus bellis, quae secunda adversum circumiectas nationes exercuerat, et senectutem Tiberii ut inermem despiciens avidisque Armeniae,

Գլ. 48. Կվիրինիուսը բնավ չէր պատկանում հին պատրիկյան Սուլպիկիուսների ազգին. նա ծագումով ինքնավար³⁸ Լանուվիում քաղաքից էր, պատերազմում անդադրում էր. չնորհիվ մատուցած վճռական ծառայությունների՝ հյուպատոս դարձավ աստվածային Աուգուստուսի ժամանակ: Բացի Կիլիկիայից Հոմոնադենների³⁹ ամրոցները պաշարելով նվաճեց և արժանացավ հաղթատոնի զարգանշանների: Նա փոխանորդ³⁵ նշանակվեց Կ. Կեսարի մոտ, երբ վերջինս տիրում էր Հայաստանին: Նույնպես հարգանք ցույց տվեց Տիբերիուսին, երբ սա զործում էր Հռոդոսում:

Գլ. 5. Աֆրիկայի մնացած մասը պահվում էր երկու լեգեոնով³⁶. Նույնքան լեգեոնով պահվում էր նույնպես Եգիպտոսը. հետո, սկսած Սիրիայից մինչև Եփրատ գետն ընկած երկրների այդ հսկայական ծոցը պահվում էր չորս լեգեոնով: Իրացի են Հիբերական (վրացական), Աղվանական և այլ³⁷ թագավորները, որոնք արտաքին պետությունների դեմ՝ մեր հզորությամբ էին պաշտպանվում:

Գլ. 31. Կայուս Կեստիուսի և Մարկուս Սերվիլիուսի³⁸ կոնսուլության ժամանակ, Պարթև մեծամեծներն եկան Հռոմ, առանց թագավոր Արտավանի գիտության: Նա (Արտավանը), վախենալով Գերմանիկուսից³⁹, հավատարիմ էր Հռոմացիցիներին ու հավասարապես էր վերաբերվում յուրայիններին: Եռուով նա մեր նկատմամբ գոռոզացավ և դաժանացավ իր հայրենակիցների վերաբերմամբ: Պարձենալով շուրջը գտնվող ժողովուրդների դեմ հաջող վարած պատերազմներով, արհամարհելով Տիբերիուսի⁴⁰ անուժ ծեբությունը, տենչալով գրավել Հայաստանը, Արտավանը

cui defuncto rege Artaxia Arsacen liberorum suorum veterrimum, inposuit, addita contumelia et missis, qui gazam a Vonone relictam in Syria Ciliciaque reposcerent; simul veteres Persarum ac Macedonum terminos seque invasurum possessa Cyro et post Alexandro per vaniloquentiam ac minas iaciebat. Sed Parthis mittendi secretos nuntios validissimus auctor fuit Sinnaces, insigni familia ac perinde opibus, et proximus huic Abdus, ademptae virilitatis. Non despectum id apud barbaros ultroque potentiam habet. Il adscitis et aliis primoribus, quia neminem gentis Arsacidarum summae rei inponere poterant, interfectis ab Artabano plerisque aut nondum adultis, Phraaten, regis Phraatis filium, Roma posebant: nomine tantum et auctore opus, ut genus Arsacis, ut sponte Caesaris ripam apud Euphratis cerneretur.

XXXII. Cupitum id Tiberio. Ornat Phraaten accingitque paternum ad fastigium, destinata retinens, consiliis et astu res externas moliri, arma procul habere. Interea cognitis insidiis Artabanus tardari metu, modo cupidine vindictae inardescere; et barbaris cunctatio servilis, statim exsequi regium videtur. Valuit tamen utilitas, ut Abdum specie amicitiae vocatum ad epulas lento veneno inligaret,

Արտաշես⁴¹ թագավորի մահից հետո, իր որդիներին երկացազույնին՝ Արշակին թագավոր դրեց Հայաստանում: Ավելացնելով վերավորանք⁴², նա մարդիկ ուղարկեց պահանջելու Վոնոնի⁴³ կողմից Սիրիայում և Կիլիկիայում թողնված գանձը: Միաժամանակ նա պահանջում էր Պարսկաստանի և Մակեդոնիայի հին սահմանները, պարծենում և սպառնում էր, թե կարշավի Կյուրոսի և ապա Ալեքսանդրի կողմից նվաճված երկրները: Սակայն Պարթևներից գաղտնի պատգամավորութուն ուղարկելու ամենահզոր հեղինակն էր՝ իր ծագումով և հարստությամբ հավասարապես հայտնի Սիննակը (Շեննակը) և սրա ամենամոտիկն էր ներքինի Աբդուսը⁴⁴: Այս վերջին հատկութունը (ներքինիութունը) բարբարոսների մոտ չի արհամարհվում և բացի դրանից հզորութուն է վայելում: Որովհետև Արշակունիների ցեղից ոչ ոքի չէին կարող պետութայն գլուխ դնել, քանի վոր մեծ մասը սպանված էր Արտավանի կողմից կամ թե դեռ չէր հասունացած, սրանք հրավերեցին նաև այլ մեծամեծների ու Հոռմից պահանջում էին Փրաատ⁴⁵ թագավորի որդի Փրատին, ասելով, թե կարիք ունին միայն անվան ու հոգատարի, որպեսզի կայսեր հաճությամբ Արշակի ցեղը հանդես գա Եփրատի ափին:

Գլ. 32, Հենց այդ էր ցանկանում Տիրերիուսը: Նա շքազարդում է Փրատին, և նախապատրաստելով հայրական թագի համար, գոտի է կապում նրան: Տիրերիուսը թագցնելով իր նպատակը, խելամտությամբ և խորամանկությամբ էր կարգավորում արտաքին գործերը, իսկ զորքերը վտանգից հեռու էր պահում: Երբ Արտավանն իմանում էր դավադրութայն մասին, վախը նրան կանգնեցնում է, բայց իսկույն նա բռնկում է վրեժառութայն տենչով: Թվում է, թե բարբարոսների մոտ դանդաղկոտութունը սարուկներին է հատուկ, իսկ անմիջապես ի կատար ածելը թագավորին: Սակայն գերակշիռ նշանակութուն ստացավ այն օգտավետ մտադրութունը, թե բարեկամութայն պատրվակի տակ խրախճանքի կանչված Աբդուսին գանդաղ գործող թույնով անգործունեութայն մատնի, իսկ Սիննա-

Sinnacen dissimulatione ac donis, simul per negotia moraretur. Et Phraates apud Syriam, dum omisso cultu Romano, cui per tot annos insueverat, instituta Parthorum sumit, patriis, moribus impar morbo absumptus est. Sed non Tiberius omisit incepta. Tiridatem, sanguinis eiusdem, aemulum Artabano reciperaeque Armeniae Hiberum Mithridaten deligit conciliatque fratri Pharasmani, qui gentile imperium obtinebat; et cunctis, quae apud Orientem parabantur, L. Vitellium praefecit. Eo de homine haut sum ignarus sinistram in urbe famam, pleraque foeda memorari; ceterum regendis provinciis prisca virtute egit: unde regressus et formidine C. Caesaris, familiaritate Claudii, turpe in servitium mutatus exemplar apud posteros adulatorii dedecoris habetur, cesseruntque prima postremis, et bona iuventae se-nectus flagitiosa obliteravit.

XXXIII. At ex regulis prior Mithridates Pharasmanem perpulit dolo et vi conatus suos iuvare, repertique corruptores ministros Arsacis multo auro ad scelus cogunt; simul Hiberi magnis copiis Armeniam inrumpunt et urbe Artaxata potiuntur. Quae postquam Artabano cognita, filium Orodem ultorem parat; dat Parthorum copias, mittit, qui auxilia mercede facerent. Contra Pharasmanes

կին կեղծավորությամբ, պարզեներով և միաժամանակ գործերով հետ պահի այդ դավադրությունից: Մինչդեռ Փրասա-տը, թողնելով հռոմեական կենցաղը, որին այնքան տարի-ներ ընտելացել էր, ձեռք էր բերում Պարթևների սովորու-թյունները, դեռ չուժեցողացած այդ հայրենի սովորություն-ների մեջ՝ հիվանդությունից մեռավ Սիրիայի մոտ: Բայց Տիրերիուսը ձեռնարկած գործը չթողեց: Արտավանի դեմ ախոյան է ընտրում նույնպիսի ծագումն ունեցող Տիրիդա-տին, իսկ Հայաստանը հետ գրավելու համար՝ իբերացի (Վրացի) Միթրիդատին (Միհրդատին): Միացնում է նրան վերջինիս եղբայր՝ Փարասմանին (Փարսամանին), որի ձեռ-քում էր գտնվում ցեղի իշխանությունը: Այն բոլոր ձեռ-նարկությունների, որ նախապատրաստվում էին Արևելքում, գլուխ էր կանգնեցրել Լյուկիուս Վիտելլիուսին: Այդ մար-գու մասին ևս անտեղյակ չեմ, Հռոմում անբարենպաստ լուր կա. հիշատակվում են բազմաթիվ զազրելի արարքներ. սակայն պրովինցիաների կառավարումը նա տարավ հին առաքինությամբ: Այդտեղից վերադառնալով, Կայուս Կե-սարից սարսափած, Կլաուդիուսի սերտ բարեկամության ազդեցության տակ՝ դարձավ զազրելի ստրուկ և հետագա սերունդների աչքում շողոքորթ անպատշաճության օրինակ համարվեց: Առաջին տեսակի արարքները տեղի տվին վեր-ջին տեսակի վարմունքներին, և երեսասարգության առա-քինությունները ջնջվեցին ծերության զազրելի արարքնե-րի պատճառով:

Գլ. 33. Եվ թագավորիկներից առաջինը Միթրիդատն (Միհրդատն) էր, որ ստիպեց Փարասմանին թե նենգու-թյամբ և թե ուժով օգնել իր ձեռնարկած գործերին: Դանը-ված գայթակղիչներն Արշակի⁴⁶ ծառայողներին շատ ոսկով հանցագործության են դրդում: Միաժամանակ Հիրերացիք մեծ գորքով ներս են խուժում Հայաստան և տիրանում Արտաշատ քաղաքին: Երբ Արտավանն իմանում է այդ, պատրաստում է իր որդի Որոդին, իբրև վրիժառուի տալիս է Պարթևական գորք և մարդիկ է ուղարկում, որպեսզի վարձու օժանդակ ուժեր պատրաստեն: Դրան հակառակ

Pharthus imperium Orientis, claritudinem Arsacidarum contraque ignobilem Hiberum mercenario milite disserebat: Pharasmanes integros semet a Parthico dominatu, quanto maiora peterent, plus decoris victores, aut si terga darent, flagitii atque periculi laturos: simul horridam suorum aciem, picta auro Medorum agmina; hinc viros, inde praedam ostendere.

XXXV. Enimvero apud Sarmatas non una vox ducis: se quisque stimulant, ne pugnam per sagittas sinerent: impetu et comminus praeveniendum. Varias hinc bellantium species, cum Parthus sequi vel fugere pari arte suetus distraheret turmas, spatium ictibus quaereret, Sarmatae omisso arcu, quo brevius valent, contis gladiisque ruerent; modo equestri proelii more frontis et tergi vices, aliquando, ut conserta acie corporibus et pulsu armorum pellerent pellerentur. Iamque et Albani Hiberique prensare detrudere, ancipitem pugnam hostibus facere, quos super eques et propioribus vulneribus pedites afflictabant. Inter quae Pharasmanes Orodesque dum strenuis adsunt aut dubitantibus subveniunt, conspicui eoque

էր այդ կենդանուց: Սակայն երկու կողմերն էլ մարտագիծ կազմելով, Պարթևը դատոււմ էր թե կովոււմ է Արևելքի պետութեան և Արշակունիների փառքի համար՝ ընդդեմ անհայա Հիբերի՝ իր վարձկան զորքով: Փարսամանն ասում է, որ իրենք ենթակա չեն Պարթևական տիրապետութեան: Որչափ ավելի են ձգտեն, այնքան ավելի արժանապատուութեան կվայելին իրեն հաղթողներ, իսկ եթե փախչեն, ավելի շատ խայտառակութեան պիտի կրեն և ենթարկվեն ավելի մեծ վտանգի: Միաժամանակ նա ցույց տվեց յուրայիններէ սարսափելի մարտաշարքը, մյուս կողմից՝ Մեդերի սկզբ գարդարված զորքը և ավելացրեց, որ այստեղ քաջեր են, իսկ այնտեղ՝ ավար:

Գլ. 35. Իսկապես Սարմատներէ մոտ միայն առաջնորդի ձայնը չէ, որ ղրդում է, այլ յուրաքանչյուրը մյուսին խթանում է՝ թե չպետք է թույլ տալ, որ մարտը նետերով լինի, այլ թշնամուն պետք է կանխել գրոհով և ձեռնամարտով: Այստեղ կային կովոդների դանադան տեսակները: Երբ Պարթևը, որը սովոր էր հավասար ճարպիկութեամբ հետապնդել կամ փախչել, շող էր տալիս հեծելավաշտերն ու լայն տարածութեան էր փնտրում հարվածելու համար, Սարմատները, մի կողմ թողնելով աղեղները, որոնց նրանք փոքր տարածութեան վրա լավ էին տիրապետում, վրա են տալիս, գործադրելով նիդակներն և սուսերը: Մեկ հեծելագորային մարտի սովորութեամբ միայն ճակատից են խփում կամ թիկունք ցույց տալիս, մեկ էլ տեսնես մարտաշարքերը բռնվում են իրար հետ, մարմնով և զենքի հարվածով իրար հրում կամ հրվում: Արդեն Ալքաններն և Հիբերները բռնում էին հակառակորդին, դիրքից դուրս էին գցում, մարտը թշնամու համար դարձնում էին ճգնաժամային. սրանց ուժեղ հարվածում է վերևից հեծելագորը, իսկ մյուս կողմից՝ հետիոտ զորքը, որը մոտիկից վերքեր է հասցնում: Այդ միջոցին Փարսամանն ու Որոզը, մինչ մերթ հանդես էին գալիս քաջարար կովոդների մոտ և մերթ օգնում էին տատանվողներին, նկատելի դառնալով և դրա շնորհիվ իրար ձանաչելով, ձիերի վրա հարձակվում են իրար դեմ գոռալով

gnari, clamore telis equis concurrunt, instantius Pharasmanes: nam vulnus per galeam adegit; nec iterare valuit, praelatus equo et fortissimus satellitum protegentibus saucium. Fama tamen occisi falso credita exterruit Parthos, victoriamque concessere.

XXXVI. Mox Artabanus tota mole regni ultum iit. Peritia locorum ab Hiberis melius pugnatum; nec ideo abscedebat, ni contractis legionibus Vitellius et subdito rumore, tamquam Mesopotamiam invasurus, metum Romani belli fecisset. Tum omissa Armenia versaeque Artabani res, inlicente Vitellio, desererent regem saevum in pace et adversis proeliorum exitiosum. Igitur Sinnaes, quem antea infensum memoravi, patrem Abdagae-sen aliosque occultos consilii et tunc continuis cladibus promptiores ad defectionem trahit, adfluentibus paulatim, qui metu magis quam benivolentia subiecti repertis auctoribus sustulerant animum. Nec iam aliud Artabano reliquum, quam si qui externorum corpori custodes aderant, suis quisque sedibus extorres, quis neque boni intellectus neque mali cura, sed mercede aluntur ministri sceleribus. His adsumptis in longinqua et contermina Scythiae fugam maturavit, spe auxilii, quia Hyrcanis Carmaniisque per adfinitatem innexus erat; atque interim posse Parthos, absentium aequos, praesentibus mobiles, ad paenitentiam mutari.

և, գործադրելով հարձակման զենքեր: Փարսամանն ավելի համառ էր կռվում. սաղավարտի վրայով նա վերք հասցրեց հակառակորդին և էլ չկարողացավ կրկնել հարվածը, որովհետև ձին նրան առաջ քշեց. վիրավորին պաշտպանում էին թիկնապահներից ամենաուժեղները: Սակայն սպանված լինելու անհիմն լուրին հավատացին, և այդ ահաբեկեց Պարթևներին, և նրանք հաղթութունը կորցրին:

Գլ. 36. Շուտով Արտավանը պետութեան բովանդակ ուժով գնաց վրեժ լուծելու: Հիբերներն ավելի լավ էին կռվում, որովհետև ծանոթ էին տեղերին⁵³: Բայց նա (Արտավանը) չէր հեռանա, եթե Վիտելլիուսը, հավաքելով յեզեռները և լուր հանելով, թե մտադիր է հարձակվել Միջագետքի վրա, հոռմեական սպառնալի պատերազմի վտանգ ստեղծած չլիներ: Այդ ժամանակ Արտավանը թողնում է Հայաստանը, գրանից հետո նրա գործերը ձախողվում են: Վիտելլիուսը գայթակղեցնում է, խորհուրդ ստելով թողնել խաղաղութեան ժամանակ դաժան և մարտերի անհաջողութունների պատճառով կործանարար թագավորին: Այդպիսով Միհնակը, որի մասին վերևում հիշատակել էի, որ թըշնամի է Արտավանին, անջատվել հորդորեց հայր Արդապեսին, խորհրդի մյուս գաղտնի մասնակիցներին և այժմ շարունակվող պարտութունների պատճառով ավելի վճռողական դարձաներին: Նրանք, ավելի շուտ վախից, քան թե հոժարակամ էին ենթարկված, կամաց-կամաց հավաքվում են Միհնակի շուրջը և, առաջնորդներ գտնելով, ուր են առնում: Արտավանի մոտ ուրիշ ոչոք չէր մնացել, եթե ոչ օտարներից միայն նրանք, որոնք ներկա էին իբրև թիկնապահ. սրանք արտաքսված իրենց երկրից, չունէին ոչ բարիքի ըմբռնում և ոչ էլ չարիքի դեմ հողատար էին. ապրում էին վարձով ու ստրուկ էին վոճիբների: Այդ մարդկանց վերցնելով իր հետ, Արտավանը շտապեց փախչել Սկյութիային⁵⁴ սահմանամերձ հեռավոր երկրքը, օգնութեան հույս ունենալով, որովհետև նա Հիրկանների (Վրկանների)⁵⁵ և Կարմանների⁵⁶ հետ կապված էր ինամութեամբ: Եվ այդ միջոցին նա մտածում էր, թե կարող է դեպի գղջում թևքել Պարթևներին, որոնք բացակա միապետի նկատմամբ արդարամիտ են, իսկ ներկայի նկատմամբ՝ խստնակիչ:

XXXVII. At Vitellius profugo Artabano et flexis ad novum regem popularium animis, hortatus Tiridaten parata capessere, robor legionum sociorumque ripam ad Euphratis ducit. Sacrificantibus, cum hic more Romano suovetaurilia daret, ille equum placando amni adornasset, nuntiavere accolae Euphraten nulla imbrum vi sponte et inmensum attolli, simul albentibus spumis in modum diadematis sinuare orbes, auspicium prosperi transgressus: quidam callidius interpretabantur, initia conatus secunda neque diuturna, quia eorum, quae terra caelove portenderentur, certior fides, fluminum instabilis natura simul ostenderet omina raperetque. Sed ponte navibus effecto tramissoque exercitu primus Ornospades multis equitum milibus in castra venit, exul quondam et Tiberio, cum Delmaticum bellum conficeret, haud inglorius auxiliator eoque civitate Romana donatus, mox repetita amicitia regis multo apud eum honore, praefectus campis, qui Euphrate et Tigre, inclutis amnibus, circumflui Mesopotamiae nomen acceperunt. Neque multo post Sinnaces auget copias, et columen partium Abdagaeses gazam et paratus regios adicit. Vitellius ostentasse Romana arma satis ratus monet Tiridaten primoresque, hunc, Phraatis avi et altoris Caesaris, quae utrobique pulchra, meminerit, illos, obsequium in regem, reverentiam in nos, decus quisque suum et fidem retinerent. Exim cum legionibus in Syriam remeavit.

Վր. 37. Մյուս կողմից Վիտելլիուսը, երբ Արտավանը փախավ և սրա համերկրացիների արամադրությունը փոփոկեց ղեպի նոր թագավորը, հորդորեց Տիրիդատին օգտվել հանգամանքից և լեգեոնների ու դաշնակիցների տոկուն մասը տարավ Եփրատի գետափը: Այնտեղ նրանք գոհ էին մատուցանում, երբ Վիտելլիուսը համաձայն հռոմեական սովորության խոզը, ոչխարը և եզը գոհում էր հանդիսավորապես, իսկ Տիրիդատը գետը խաղաղացնելու համար ձին էր զարդարել, տեղական բնակիչները հայտնեցին, թե Եփրատն առանց անձրևների ինքնակամ և անսահման բարձրանում է. հաջող փոխադրման գուշակություն է նշանակում այն, երբ սպիտակին սովող փրփուլները շրջաններ են կազմում ապարոշի ձևով: Ոմանք ավելի խորագետ կերպով էին մեկնաբանում, ասելով, թե ձեռնարկության սկիզբն հաջող է, բայց երկարատև չէ, որովհետև այն նշանները, որ ցույց են տրվում երկրի կամ երկնքի կողմից, ներկայացնում են ավելի մեծ վստահություն, քան գետերի անկայուն բնությունը, գետերի, որոնք ցույց են տալիս և միաժամանակ փախցնում են նշանները: Նավերով կամուրջ կառուցելուց և զորքը փոխադրելուց հետո, առաջինն Օրնոսպազն էր, որը բազմահազար հեծելազորով մտավ ճամբար. մի ժամանակ նա վտարանդի էր և, երբ ավարտվում էր Դարմատական պատերազմը, անփառունակ օգնական չէր Տիրեբրուսի համար, և այդ պատճառով շնորհված էր նրան Հոռմի քաղաքացիություն. հետո, երբ վերականգնվեց թագավորի (Արտավանի) բարեկամությունը, նրա մոտ վայելում էր մեծ պատիվ և նշանակված էր պետ այն գաշտերի, որ շրջափակված են Տիգրիս և Եփրատ հայտնի գետերով և ստացել են Մեսոպոտամիա (Միջագետք) անունը: Ոչ շատ ժամանակ հետո Սիննակն ուժեղացնում է իր զորքը, և Արգապեսը, որն այդ կուսակցության զորավիգն էր, միացնում է դանձարանն ու թագավորական զարդարանքը: Վիտելլիուսը, գտնելով, որ հռոմեական զորքի ուժի ցուցադրումը բավական է, հետևյալ խորհուրդն է տալիս Տիրիդատին և մեծամեծներին: Առաջինին նա ասաց, որ հիշի իր պապ Փրատատին և իրեն մեծացնող կեսարին⁵⁶, հիշողություններ,

(բաղվածք)

XXXVIII. Quae duabus aestatibus gesta coniunxi, quo requiesceret animus a domesticis malis....

(բաղվածք)

XL. ...Ne Tigranes quidem, Armenia quondam potitus ac tunc reus, nomine regio supplicia civium effugit....

XLI. Per idem tempus Clitarum natio Cappadoci Archelao subiecta, quia nostrum in modum deferre census, pati tributa adigebatur, in iuga Tauri montis abscessit locorumque ingenio sese contra imbelles regis copias tutabatur, donec M. Trebellius legatus, a Vitellio, praeside Syriae, cum quattuor milibus legionariorum et delectis auxiliis missus, duos collis, quos barbari insederant (minori Cadra, alteri Davara nomen est), operibus circumdedit et errumpere ausos ferro, ceteros siti ad deditionem coëgit. At Tiridates volentibus Parthis Nicephorium et Anthemusiada ceterasque urbes, quae Macedonibus sitae Graeca vocabula usurpant, Halumque et Artemitam, Parthica. oppida, recepit, certantibus gaudio, qui Artabanum Scythas inter eductum ob saevitiam execrati come Tiritadis ingenium Romanas per artes sperabant.

որոնք երկու կողմից էլ հրաշալի են, իսկ մեծամեծներին, որ զիջող լինեն դեպի թագավորը և պահպանեն հարգանքը դեպի մեզ, և թող յուրաքանչյուրը պահպանի իր արժանապատվությունն և հավատարմությունը: Հետո նա իր լեզեոններով հետ գնաց Սիրիա:

(բաղվածք)

Գլ. 38. Երկու տարվա ընթացքում կատարվածը միացրի, որպեսզի դրանով հոգիս հանգստանա մեր ներքին դժբախտություններից. ...

(բաղվածք)

Գլ. 40. ...Անգամ Տիգրանը, որը մի ժամանակ տիրում էր Հայաստանին, իսկ այժմ մեղադրյալ է, չնայած իր թագավորական կոչման, չխուսափեց մահապատժից, որին ենթարկվում են քաղաքացիները. ...

Գլ. 41. Այդ ժամանակ Կապադովկիայի Արքեպոսին ենթակա Կլիտ⁵⁷ ազգությունը հեռացավ Տավրոս լեռնաշղթայի բարձունքները, որովհետև ստիպում էին մեր ձեռով գույքն ի հայտ բերել ցուցակագրելու համար և քաշել հարկերի ծանրությունը. նրանք շնորհիվ տեղերի բնական դիրքին՝ պաշտպանվում էին թագավորի անուղղմանը գործի գեմ, մինչև որ լեգատ Մարկուս Տրեբելլիուսը, որը Սիրիայի պետ Վիտելլիուսի կողմից ուղարկվեց 4000 լեգեոնականների և ընտիր օժանդակ զորքի հետ, իր զորքով շրջապատեց այն բլուրները, որոնց վրա նստած էին բարբարոսները (բլուրներից փոքրի անունն էր Կադրա, իսկ մյուսինը՝ Դավարա), և արտելքի հանդգնածներին զենքով, իսկ մնացածներին ծառավի մատնելով, ստիպեց անձնատուր լինել: Իսկ Տիրիդատը Պարթևների հաճությամբ վերցնում է Նիկեփորիումը և Անթեմուսիազան⁵⁸ և այլ քաղաքներ, որ հիմնադրված էին Մակեդոնացիների կողմից և հունական անուններ ունեին. նա վերցրեց նաև Հալուսը և Արտեմիտան⁵⁹, Պարթևական քաղաքներ. կռվում էին հաճույքով նրանք, որոնք նգովիլ էին Սկյութացիների մոտ դաստիարակված և իր դաժանությամբ հայտնի Արտավանին և հույսը դրել էին Տիրիդատի քաղցրահամբույր բնավորության վրա, որը կազմվել էր շնորհիվ Հոռոմայեցիների կրթական արվեստի:

XLII. Plurimum adulationis Seleucenses induere, civitas potens, saepta muris neque in barbarum corrupta, sed conditoris Seleuci retinens. Trecenti opibus aut sapientia delecti, ut senatus; sua populo vis: et quoties concordēs agunt, spernitur Parthus; ubi dissensere, dum sibi quisque contra aemulos subsidium vocant, accitus in partem adversum omnes valet. Id nuper acciderat Artabano regnante, qui plebem primoribus tradidit ex suo usu: nam populi imperium iuxta libertatem, paucorum dominatio regiae libidini propior est. Tum adventantem Tiridaten extollunt veterum regum honoribus, et quos recens aetas largius invenit; simul probra in Artabanum fundebant, materna origine Arsaciden, cetera degenerem. Tiridates rem Seleucensem populo permittit. Mox consultans, quonam die sollempnia regni capesseret, litteras Phraatis et Hieronis, qui validissimas praefecturas obtinebant, accipit, brevem moram precantium. Placitumque opperiri viros praepollentis, atque interim Ctesiphonem, sedes imperii, petita. Sed ubi diem ex die prolatabant, multis coram et adprobantibus Surena patrio more Tiridaten insigni regio evinxit.

XLIII. Ac si statim interiora ceterasque nationes petivisset, oppressa cunctantium dubitatio et omnes in unum

Գլ. 42. Սելեվկացիք⁶⁰ աչքի էին ընկնում չափազանց շողոքորթությամբ. քաղաքը հզոր էր, շրջապատված էր պարիսպներով, սակայն փչացած էր բարբարոսների նման, այլ պահպանում էր իր հիմնադիր Սելեվկոսի⁶¹ բարքերը: Հարստության կամ իմաստության հիման վրա երեք հարյուր ընտրվածները ծերակույտ են կազմում. ժողովուրդն ունի իր կշիռը. և երբ գործում են համերաշխ, Պարթևն արհամարհվում է. երբ տարաձայնություն է լինում նրանց մեջ, երբ յուրաքանչյուրն իրեն համար օժանդակություն է խնդրում հակառակորդի դեմ, մի կողմից հրավիրվածը ուժ է ստանում բոլորի դեմ: Այդ տեղի է ունեցել քիչ առաջ Արտավանի թագավորության ժամանակ, որը հասարակ ժողովուրդը հանձնեց մեծամեծներին իր շահերի համար, քանի որ ժողովրդի իշխանությունը համատեղվում է ազատության հետ, իսկ սակավաթիվ մարդկանց տիրապետությունը բարեկամ է լինում թագավորական կամայականությունը: Այդ ժամանակ արագ մոտեցող Տիրիդատին մեծարում են հին թագավորների և նոր սերնդի ավելի լայն պատիվներով. միաժամանակ Արտավանի մասին տարածում էին զազրելի լուր, թե նա միայն մի կողմից է Արշակունի, իսկ մյուս կողմից ստոր ծագում⁶² ունի: Տիրիդատը ժողովրդին հանձնեց Սելեվկիայի իշխանությունը: Հետո խորհրդածեղով, թե ո՞ր օրը պետք է սկսել թագադրության հանդիսավոր արարողությունը, գրություն է ստանում Փրատից և Հիերոնից, որոնց իշխանություն տակն էին գտնվում ամենաուժեղ շրջանները. երկուսն էլ խնդրում էին կարճ ժամանակով հետաձգել: Որոշվեց սպասել այդ մեծագոր մարդկանց. այդ ժամանակամիջոցում տիրեցին պետության մայրաքաղաք Կոնստինդնուպոլիսը (Տիրզոնը)⁶³: Սակայն, երբ նրանք օրեցօր հետաձգում էին, մեծ բազմությունների կայությունը և հավանությունը, ըստ հայքենական սովորության Սուրենա-ն⁶⁴ (Սուրենը) Տիրիդատին զարդարեց թագավորական նշանով:

Գլ. 43. Եթե իսկույն ուղևորված լինեին երկրի ներքև և այլ ժողովուրդների երկրները, զանդադողների տատան-

cedebant: adsidendo castellum, in quod pecuniam et paelices Artabanus contulerat, dedit spatium exuendi pacta. Nam Phraates et Hiero, et si qui alii delectum capiendi diademati diem haut concelebraverant, pars metu, quidam invidia in Abdagaesen, qui tum aula et novo rege potiebatur, ad Artabanum vertere. Isque in Hyrcanis repertus est, inluevie obsitus et alimenta arcu expediens. Ac primo, tamquam dolus pararetur, territus, ubi data fides reddendae dominationi venisse, adlevatur animum, et quae repentina mutatio, exquiri. Tum Hiero pueritiam Tiridatis increpat, neque penes Arsaciden imperium, sed inane nomen apud inbellem externa molli-
tia, vim in Abdagaesis domo.

